ՍԻՐԻԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԸ Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈ (1940-1970ԹԹ.)

Հայկական բնակավայրերը Սիրիայում առաջացել են մ.թ.ա. 1-ին դարում եւ կապուել են Տիգրան Բ.ի արշավանքների հետ: Հետագա դարերում Սիրիայի հայ գաղութը մեծանում է: Սակայն Սիրիայի հայկական բնակավայրերը զգալիորէն կը համալրվեն Ա. աշխարհամարտից հետո:

Սիրիայի հայ համայնքի քանակական կազմը պարբերաբար փոխվել է ներքին եւ արտաքին դրդապատճառների հետևանքով: Հայ բնակչությունը ապրել ու ապրում է ողջ երկրի տարածքում, մասնաւորապես խոշոր քաղաքներում Դամասկոսում, Հալեպում, Լաթաքիայում, Քեսապում, Հոմսում, Գամիշլիում:

Սիրիայի ամենահայահոծ քաղաքն էր Հալեպը: Կիլիկիայի աղետից հետո, հայ գաղթականների հիմնական զանգվածը տեղաբաշխված էր հյուսիսային Սիրիայում ներառյալ Ալեքսանտրէտ սանճագի քաղաքներում:

Դամասկոսը, որ առանձին թեմ մըն էր, իր մեջ ընգրկում էր Համա, Հոմսը, Սելեմիեն եւ Ճեպել Տրուզը: 1946թ.ի ներգաղթի օրերին հայ ազգաբնակչությանն թիվը հետզհետէ նահանջ է արձանագրում: 1949թ. Դամասկոս իր շրջաններով ուներ շուրջ 4500-5000 հայեր, իսկ Հոմսը 350-450 անձ[1]: Իսկ Հավրանում եւ Տարայում ձեւավորված գաղթօջախները իսպառ վերանում են: Արտագաղթի պատճառավ նոսրանում է հայ ազգաբնակչությունը:

<u>Սիրիայի քաղաքական կացությունը Բ. Աշխարհամարտից հետո եւ անդրադարձ տեղի հայկական համայնքի վրա (1940-1970թուականներին)</u>

1939թ. երկրորդ աշխարհամարտի սկզբից Ֆրանսիական իշխանությունները Սիրիայում մտցրեցին արտակարգ դրություն: Նրանք դիմեցին մի շարք սահմանափակումների. ցրեցին խորհրդարանը, հեռացրին բոլոր նախարարներին եւ կառավարության փոխարեն ստեղծեցին պետական քարտուղարություն: Բացի այդ, կատարվեցին մի շարք հակադեմոկրատական քայլեր՝ արգիլվեցին առաջադեմ կազմակերպությունները, ձերբակալվեցին նրանց ղեկավարները եւ այլն: 1940թ. Ֆրանսիան պատերազմում պարտություն կրեց եւ մասնակիորէն գրաւեց եւ շրջափակուեց հիթլերականների կողմից: Որից հետո

[1] Բերիո Թեմի Ազգային Առաջնորդարանի արխիվ, դարան բ., գործ 62.

Սիրիայի Ֆրանսիական մանդատային իշխանությունները հավատարմությունը հայտնեցին հիտլերականների հետ գործող Վիշիի կառավարությանը:

1941թ. հունիսի 8-ին Անգլիայի եւ «Մարտնչող Ֆրանսիայի» զորքերը մտան Սիրիա եւ Լիբանան, հայտարարելով այդ երկիրները ազատ ու անկախ[2]: Չնայած Ֆրանսիական /վիշիական/ զորքերի դիմադրությանը դաշնակից բանակները, տեղական ժողովրդի աջակցությամբ, բավական արագ հաղթանակ տարան եւ 1941թ. հուլիսի 15-ին Անգարայում կնքվեց հաշտության համաձայնագիր, ըստ որի դաշնակից զորքերը գրավեցին Լիբանանը, իսկ վիշիական զորքերը դուրս բերվեցին այնտեղից: Միառժամանակ հետո Անգլիան ճանաչեց Ֆրանսիայի հատուկ շահերը Սիրիայում եւ Լիբանանում, որոնք մնացին Անգլիայի եւ «Մարտնչող Ֆրանսիայի» իշխանության ներքո: Սակայն երկրի բնակչության ճնշող մեծամասնությունը ձգտում էր ազատվել օտար տիրապետությունից:

1941թ. հունիսի 8-ին խոստանալով միջոցներ ձեռնարկել Սիրիայում եւ Լիբանանում մանդատային ռեժիմի վերացման համար, սակայն Ֆրանսիական իշխանությունները չէին շտապում գործնական քայլերի դիմել: Դեռ ավելին, «Մարտնչող Ֆրանսիան» լրիվ իր վրա վերցրեց մանդատային իշխանության գործառույթները: Ֆրանսիացիները նրանց ձեռքում կեդրոնացրեցին ողջ քաղաքական իշխանությունը, Սիրիայի եւ Լիբանանի մաքսերի գանձումը, առեւտրաարդիւնաբերական ընկերությունները, որոշ տնտեսական եւ ֆինանսական հարցեր, տեղական բանակը, ներքին անվտանգությունը, գրաքննությունը եւ այլն: Այս բոլորը խիստ դժգոհություն առաջացրեց երկրի ներսում: Դեմոկրատական ուժերը պահանջում էին վերականգնել երկրի սահմանադրությունը եւ կատարել խորհրդարանական ընտրություններ, այն համարելով Սիրիայի ձնական անկախությունը իրական դարձնելու քայլերից մեկը: Ֆրանսական գաղութարարները լսել անգամ չէին ուզում շուտափույթ ընտրություններ կատարելու եւ սահմանադրության առաջարկները: Նոյնիսկ Տը Կոլ, այցելելով Լեանտի երկիրները եւ տեսնելով Սիրիայում կուտակված դժգոհությունները բացայայտորեն հայտարարում է «որ Սիրիայում եւ Լիբանանում ընտրութիւններ տեղի չեն ունենա»[3]: Երկրում կուտակված դժգոհությունը հակաֆրանսիական եւ հակաանգլիական գաղութարարների դեմ, շարունակվում է ողջ 1942թ. եւ 1943թ. սկիզբը[4]:

---

[2] «Եփրատ» օրաթերթ, 20-ապրիլ-1946, թիվ 2611:
[3] Հովհաննիսյան Ն. Հ. Սարգսյան Հ. Ս. «Սիրիան Անկախության համար մղված պայքարում», Ե., 1975, էջ 234:
[4] Նույն տեղը էջ 235-236:

1942թ. Սիրիայի գլխավոր քաղաքներում ընդհանրումներ տեղի են ունենում Սիրիայի բնակչության եւ Ֆրանսիական զորքերի միջեւ: «Սիրիայի արաբ բնակչությունը բացահայտ կերպով իր դժգոհությունն է հայտնում անգլիական գաղութատերերների վարքագծից: Շատ քաղաքներում տեղի են ունենում արաբների ցույցեր անգլիական զորքերը Սիրիայից հեռացնելու պահանջով: Անգլիական իշխանությունները դրան պատասխանում են արաբների դեմ տեռորը ուժեղացնելով»[5]:

Ի վերջո Ֆրանսիան ստիպվեց զիջումներ կատարել եւ, ահա 1943թ. Լիբանանի ժողովրդի ազգային անկախության համար տարիներ տեւող պայքարը պսակվեց հաջողությամբ: Քաղաքական բարդ իրադրության պայմաններում, պայքարի համարյա բոլոր փուլերում, հայերը ցուցաբերցին քաղաքացիական պատշաճ գիտակցություն իրենց երկրորդ հայրենիքի նկատմամբ: Այդ վարքագիծը բարձր գնահատվեց ազգային-ազատագրական ուժերի կողմից եւ զգալիորէն նպաստեց հայ-արաբական բարեկամության ամրապնդմանը: Հայ դեմոկրատները համարում էին, որ հայերի տնտեսական եւ քաղաքական զարգացումը բոլոր թելերով կապված է Սիրիայի հետ եւ նրանց սուրբ պարտականությունն է արաբների հետ միասին պայքարել:

1943թ. Սիրիայի ազգային անկախության համար դաշնակից զանազան կառավարությունների կողմից ճանաչվեց Սիրիայի անկախությունը: 1943թ. մարտի 25-ին Ֆրանսիան որոշեց վերականգնել 1930թ. մայիս 14-ի սահմանադրությունը եւ արտոնվեց խորհրդարանական ընտրության կատարումը: Ստեղծվեց ժամանակավոր կառավարություն՝ Աթա ալ Այյուպիի գլխավորությամբ: Ընտրութիւնները կատարվեց երկու փուլով: Երկրորդին հաղթեցին ազգայնականները՝ «Քութլա վաթանիէ» կուսակցությունը, Շուքրի Քուաթլիի գլխաւորությամբ: Խորհրդարանի անդամ ընտրվեցին չորս հայ նախարարներ, որոնցից մին Դամասկոսից, իսկ երեքը՝ Հալեպից[6]:

Նույն թվականի օգոստոս 17-ին ընտրվեցին Սիրիայի եւ Խորհրդարանի նախագահներ: Սակայն Սիրիայի նորաստեղծ կառավարության առջև կանգնեցին կարգ մը բարդ խնդիրներ, որոնք անմիջապես կախյալ էին Սիրիայում իրավական եւ իրական անկախությունից: Սիրիայի անկախությունը ձեւական բնույթ կրեց, որովհետեւ Ֆրանսիան ոչ մեկ ձեւով հրաժարվել էր նրա իրավունքներից եւ չէր ուզում մանդատի վերացումը: Այսպիսով Ֆրանսիան ոչինչ չէր կարող փոխեր Սիրիայի իրադրությունից եւ միտում էր նախկինի նման

---

[5] Նույն տեղը էջ 235:
[6] Նույն տեղը էջ 241:

կախման մեջ պահել: Հակառակ Ֆրանսիային հարուցած դժվարությունների ու դիմադրությանը, Սիրիայի կառավարությունը ձեռնամուխ եղավ երկրի սահմանադրական օրենքներից վերացնել այն հոդվածները, որոնք վերաբերում էին Ֆրանսիայի իրավունքներին եւ մանդատի վերացմանը: Ֆրանսիան մերժում է այդ բոլորը և հրապարակում է երեք կետերից բաղկացած հայտարարություն, որով սահմանում ու ճշդում է նրան եւ Սիրիայի, Լիբանանի միջև յարաբերությունների առավել պարզացում, յստակացում եւ այլն[7]: Դա նշանակում էր Ֆրանսիական մանդատի պահպանում, սակայն որոշ չափով բարեփոխված:

Պետք է նշել, որ այս ժամանակաշրջանը ընդհանրապես ողջ սփյուռքի համար բնորոշվում էր որպես բուռն վերելքի շրջան: Արեւելքում ազգային-ազատագրական պայքարը գաղութարարների դէմ եւ հակաֆաշիստական ուժերի հաղթանակը համաշխարհային պատերազմում նոր թափ էր հաղորդել սփյուռքահայության ազգային ինքնագիտակցության բարձրացման, ինչպէս նայեւ հայ համայնքների ընկերաքաղաքական եւ հասարակական կյանքում: Կարեւոր բարեփոխումներ իրականացրին նայեւ ազգային-մշակութային ընկերությունները, սկսվեց գործել բազմաթիւ նախակրթարաններ, միջնակարգ դպրոցներ, տասնյակ մշակութային ընկերություններ, լոյս ընծայվեց պարբերական մամուլը, գրական եւ գիտական աշխատություններ, աշխուժանում է նայեւ թատերական կյանքը, հանդէս են գալիս երիտասարդ նկարիչներ, քանդակագործներ, ճարտարապետներ: Մշակութային կյանքի զարգացման այսպիսի պայմաններում հայկական ազգային վարժարաններում միասնություն մտցրելու անհրաժեշտությունը զգացվում է: Այս նպատակին կարող էր ծառայել միասնական կրթական եւ դաստիարակչական կանոնագիր-ծրագիրը: Այդպիսի ծրագրի ստեղծման անհրաժեշտությունը հասունանում էր նախ եւ առաջ այն պատճառով, որ հայերը այլեւս չէին դիտում Սիրիան որպէս ժամանակավոր հանգրվան, այլ որպէս երկրորդ հայրենիք, ուր նրանք կարող էին մշտական բնակություն հաստատել:

1944-1945թթ. Կիլիկիայի թեմերի ընդհանուր վիճակացույցը ներկայացնում էր հետեւյալ պատկերը 79.648 անձ /Բերիա 69.738, Դամասկոս 9.910/: Եթէ ավելացնենք հայ կաթողիկե եւ հայ ավետարանական համայնքի թիվը կարող ենք ենթադրել Սիրիայի տարածքին հայ բնակչության թիւը շուրջ 90-100 հազար[8]: Նայեւ այստեղ ավելացնելով առաջնորդարանի վիճակագրությունը:

---

[7] Նույն տեղը էջ243-244-245:

[8] Բյուզանդ Եղիայան «Ժամանակակից Պատմություն Կաթողիկոսություն Հայոց Կիլիկիոյ», էջ 588:

Անհրաժեշտ է նշել, որ հայկական գաղութի կյանքի մեջ մեծ դեր խաղաց եկեղեցին: Սփյուռքի կազմության օրերին գաղութը չի ունեցել քաղաքական դիմագիծ: Հայությունը առավելաբար համախմբված է եղել ազգային-կրոնական, եկեղեցական-բարեսիրական միությունների շուրջ:

Քննարկվող ժամանակահատվածում Սիրիայի քաղաքական կյանքում տեղի է ունենում կարեւոր իրադարձություն: Դա դիվանագիտական յարաբերությունների հաստատումն էր Սիրիայի եւ Սովետական Միության միջեւ[9]: Դիվանագիտական հարաբերությունների հաստատում նշանակում է պաշտօնապես ճանաչել Սիրիայի անկախությունը եւ ամրապնդել նրա միջազգային դիրքերը:

1946թ. Սիրիայում եւ Լիբանանում սկսվում է արեւմտեան պետությունների դէմ պայքարի նոր փուլ, որի հիմնական նպատակը երկրի անկախության պահպանումն ու ամրապնդումն էր: Արեւմտեան տէրությունները, ընդունելով Սիրիայի քաղաքական անկախությունը, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շարունակում էին առաջ քաշել տարբեր տեսակետներ, որոնց օգնությամբ ձգտում էին ուժեղացնել իրենց ռազմաքաղաքական, տնտեսական եւ ֆինանսական ազդեցությունը արաբական երկիրներում, այդ թվում նաեւ Սիրիայում: Այդ ուղղությամբ յատկապես լայն գործողություն էին ծավալել Անգլիան եւ ԱՄՆ-ը: Նպատակները իրագործելիս փորձում էին կենսագործել «Մեծ Սիրիա»ի ծրագիրը: Լիբանանում եւ Սիրիայում դեմոկրատական ուժերը բացասական դիրք են գրավում: Սիրիայի կառավարությունը երկար տատանումներից հետո, 1950-ական թթ. կիսուն որդեգրում է արեւմտեան տերութիւնների քաղաքական գիծը: Այս իրավիճակը դեմոկրատական ուժերի եւ կառավարության միջեւ բախում է ստեղծում, որը հանգում 1958թ. ապստամբության:

Արեւմտյան տերությունների գաղութատիրական ծրագիրների դեմ Սիրիայի արաբ ժողովրդի եւ դեմոկրատական ուժերի հետ կողք-կողքի հանդես են գալիս հայերը եւ դեմոկրատական հոսանքները: Նրանք գտնում էին, որ այդ ծրագիրները պատերազմի սպառնալիք են ստեղծում: Իսկ «հայ ժողովուրդը որեւէ շահ չակնկալեր պատերազմից, տեսած ու կրած ըլլալով նրա ծանրությունն ու դառնությունը համաշխարհային երկու պատերազմներում: Հայ ժողովուրդը կողմնակից էր առեւտրական, մշակութային այնպիսի դաշինքների, որոնց ընթացքում առատորէն նպաստավորվում էին բոլոր ազգերը առանց արեան հոսումի, պայմանավ, որ այդ դաշնագիրները կնքվեն բոլոր ազգերի հետ եւ ոչ թէ միակողմանի եղանակով»:[10]

---

[9] «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկիրներ եւ ժողովուրդներ», Երեվան 1974, Զ. հատոր, էջ 84:

[10] «Արարատ» օրաթերթ, Լիբանան, 25 յունիս, 1954:

Հայ դեմոկրատական ուժերի գրաված այդ դիրքը հասկանում էին եւ բարձր էին գնահատում Սիրիայի եւ Լիբանանի թէ ժողովրդական զանգվածները եւ թէ պետական ու քաղաքական գործիչները:

Ֆրանսիան ամէն կերպ մերժում էր հատուկ զորամասերի Սիրիայի փոխանցելու խնդիրը: Որովհետեւ նրանք կազմում էին երկրի ազգային բանակը, որոնց մաս կազմում էին տեղացի արաբները, չերքեզները, քուրտերը եւ հայերը:

Հայերը կողք-կողքի կանգնում են նրանց արաբ եղբայրների ազգային ազատագրական պայքարի փուլերի ընթացքում: Նորաստեղծ բանակի կամավորագրվելու գալիս են մեծ թվով հայեր: Այս առնչությամբ մեծ է դերը Հալէպի Առաջնորդին: Նա կոչ է ուղղում ֆրանսիական բանակում ծառայող հայորդիներին եւ պաշտօնյաներին հրաժարվել եւ դուրս գալ ֆրանսիական զորամասերից եւ մաս կազմել սիրիական ազգային ուժերին[11]:

Մինչեւ 1959թ. Հալեպի հայկական գաղութը հաշվում էր շուրջ 70.000 մարդ: Սակայն վերջին տարիներին, 1959-ից հետո, քաղաքական եւ տնտեսական ոչ կայուն իրավիճակի, ինչպես նաեւ իրավունքների ոտնահարման պատճառով, զգալի քանակությամբ ունեւոր հայեր տեղափոխվում են Լիբանան, ԱՄՆ եւ Լատինական Ամերիկայի երկիները՝ այնտեղ բնակություն հաստատելու: Երեւույթը Հալեպում զգալիորէն ուժեղանում է հատկապես 1964-ից հետո, հայ ներկայացուցիչների կազմակերպչական համապատասխան աշխատանքով :

1954թ. Սիրիայում սկսվում է անակնկալ դեպքերով: Հունվար 27-ին Չիչեքլիի կառավարությունը դիմում է խմբական ձերբակալությունների: Արգելափակում է ժողովրդական, ազգայնական, ընկերվարական եւ այլ կուսակցությանց պատկանող դեմքերի գործունեությունը: Փետրվարի 5-ին փակվում է Սիրիայի եւ Լիբանանի սահմանները կառավարության որոշումով: Հոկտեմբեր 29-ին կազմվում է գործակցական կառավարություն՝ Ֆարես էլ Խուրիի վարչապետությամբ: 1956թ. 18 օգոստոսին Սիրիայի երեսփոխանական ժողովը հանրապետության նախագահ ընտրում է Շյուքրի Քուաթլիին:

Արտագաղթի համապատասխան կազմակերպչական աշխատանքը դեպի Քանատա տեղափոխվելու, ոչ միայն կատարվում էր հայ ներկայացուցիչների կողմից, այլ քանատական իշխանությունները շահագրգռվել էին երկրում աշխատունակ բնակչության վերաբնակեցման հարցով: Հիմնական նպատակն էր ՍՍՀ-էն աշխատունակ բնակչությամբ բնակեցնել երկրում չբնակված հյուսիսային շրջանները: Քանատական իշխանության կողմից տարվող աշխատանքը վերաբերում էին ոչ միայն հայերի, այլ տեղի բնակչության :

---

[11] Յովհաննիսյան նույն տեղը, էջ 276-277-278-278-280-281-282-283:

Քննվող ժամանակահատվածում արտագաղթը պայմանավորվում էր երկրում տիրող աննպաստ ընկերային, տնտեսական եւ քաղաքական պատճառներով: Հալեպի հայկական համայնքը թշնամաբար տրամադրվել էր 1958-ից հետո՝ Նասերի վարչակարգի հարուցած արգելքներին: Նասեր իր քաղաքականությամբ ոտնահարում էր փոքրամասնութիւնների իրաւունքներին, իրականացնելու համար իր կողմից ընդգծվող «պանիսլամիզմի» քաղաքականությունը: Այդ իրադրությունը խախտել էր հայկական գաղութի դրությունը: Արաբական Միացեալ Հանրապետության սիրիական շրջանի համայնավարների զանգվածային ձերբակալության օրերին թուլացավ տեղական հայկական գաղութի կապը նայեւ ԽՍՀՄ գլխավոր հյուպատասարանի հետ:

60-ական թթ.սկիզբը ոստիկանական իշխանությանն կողմից արգիլում է հատկապէս հալեպաբնակների Սիրիայից գաղթելու թույլտվությունը[12]:

1963թ. փետրվարին Իրաքի եւ մարտին Սիրիայում տեղի է ունենում պետական հեղաշրջումներ: Իշխանությունը անցնում է «Բաաս» կուսակցության: Երկու երկիրներում նույն իշխանության հաստատումը պայմաններ էր ստեղծում փոխյարաբերության զարգացման եւ ընդլայնման: «Բաաս»ի հաստատումով քաղաքական ասպարեզ գալիս էին Սիրիայի հասարակության այն խավերը, որոնք նախորդող ժամանակաշրջաններում հեռացել էին պետական կառավարման մասնակցելուց: Սիրիայում կազմվում է նոր կառավարություն, որի հիմնական առաջադրաքներից էր կլսռուցել արաբական սոցիալիստական հասարակություն, առաջնահերթ խնդիր էին համարել Սիրիան միավորել Իրաքի եւ Եգիպտոսի հետ:

1963թ. «Բաաս» կուսակցությունը իշխանության գալով, «տեղական իշխանությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ փոքր ինչ փոխվեց, հաշվի առնելով տեղացի հայերի դերը տնտեսական ու քաղաքական կեանքում, ինչպես նայեւ ձգտելով ամրապնդել իր դիրքերը քրիստոնյաների մոտ: Տեղի կուսակցական առաջնորդները փորձեցին կապեր հաստատել հայկական առաջադիմական կուսակցությունների հետ: Սույն թվականի ապրիլ ամսին Հալեպի Բաասիստների ղեկավարությունը որոշում ընդունեց վերանայել հնարավորությունը գործնական համագործակցությունը՝ հնչակյան եւ ռամկավար կուսակցութիւնների ղեկավարներին համագործակցության առաջարկով եւ նրանց կուսակցական գծի պահպանման համար անհրաժեշտ օգնություն ցուցաբերելով: Հնչակների ու ռամկավարների ներկայացուցիչները անտեսեցին այդ առաջարկություններ, պատճառաբանելով, որ իրենց կուսակցութիւն-

---

[12] ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿՊԱ, Ֆ. 326, ց.1, գ. 342, թ.1:

ները համարվում են լուծարված ու անգործունյա: Եւ կազմակերպչական հիմք չկա ԲԱԱՍ-ի կուսակցության հետ փոխադարձ համագործակցության համար[13]:

Պետք է նշել, որ այլ էր տեղական իշխանութիւնների յարաբերությունները դաշնակցականների հետ, որոնք մեծ հեղինակություն եւ ամուր դիրքեր ունէին երկրում, իսկ պետական գործիչների հետ լաւ կապեր: Սակայն «1961թ. ՍԱՀ-ում դաշնակ լրտեսական խմբի հայտնաբերելուց հետո, որոնք գտնվում էին ԱՄՆի եւ Իսրայելի լրտեսական խմբերում, դաշնակները զգալիորէն կորցրեցին հեղինակությունը եւ տեղական իշխանությունների կողմից հովանավորությունը, որոնք այժմ ամեն ձեւով ուզում են դաշնակների գործողությունը պահել հսկողության տակ»[14]: Արտագաղթի պատճառ կարող է հանդիսանալ նայեւ այս երեւոյթը: Տեղացի հայերի զգալի մասը լքելով ՍԱՀ՝ մշտական բնակության համար տեղափոխուեցին Ֆրանսա, ԱՄՆ, Քանատա, Լատինական Ամերիկայի երկիրները եւ Աւստրալիա, մյուսները գնացին Լիբանան, Քուէյթ, Լիպիա եւ Արեվելեան Արապիոյ մյուս երկիրները: Դեպի Լիբանան եւ Հարավային Ամերիկայի երկիրները մշտական բնակության մեկնեցին նայեւ Սիրիայի արաբ քաղաքացիների զգալի մասը:

1964-1966թթ. Սուրիայէն Խորհրդային Հայաստան տեղափոխվելու եւ մշտական բնակություն հաստատելու մտադրությամբ միայն Հալեպից մեկնել են 2500-ից ավելի սիրիացի հայեր[15]: Սիրիայից դեպի Խորհրդային Հայաստան մշտական բնակության դիմումները կատարվել են նայեւ հետագա տարիներին: 1967-1968թթ. Մերձավոր Արեւելքում տիրող իրավիճակը, որը պայմանավորվել էր Իսրայէլի սանձազերծված նուաճողական քաղաքականութեամբ, պատճառ է հանդիսանում, որ հայերի դեպի Հայաստան տեղափոխությունը չիրականանայ:

Այնուամենայնիվ, հակառակ նշված սահմանափակումներին ու խոչընդոտներին մինչեւ օրս հայկական համայնքը Սիրիայում շարունակում է գոյատեւել:Գաղութը անցյալի թվական պատկերը չի ներկայացնում, բայց եւ այնպես այսօր այնտեղ գործում են կրթօջախներ, մշակութային, հայրենակցական, մարզական եւ բարեսիրական հաստատություններ: Նրանք վայելում են տեղական իշխանության համակրանքը եւ առաջ են տանում հայապահպանման աշխատանքը սփիւռքի տարածքում: Վերջին տարիներին արդեն աշխուժացել են հայրենիք-սփիւռք համագործակցությունը տարբեր բնագաւառներում, ինչ որ կը նպաստի հայկական համայնքի հայապահպանման գործի առաքելության:

---

[13] ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿՊԱ, ֆ. 326, ց. 1, գ. 441, թ. 11-12:
[14] ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿՊԱ ֆ. 875, ց.1, գ. 6, թ. 2-3:
[15] Ֆ.326, ց.1, գ.441. թ.1: